Կազմակերպության անվանում	«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ	Փոխանցման հաշիվ 15.07.2019թ. Ուժի մեջ է 20 աշխատանքային օր
Իրավաբանական հասցե	ք. Երևան, Արշակունյաց 23	
Գործունեության հասցե	ք. Երևան, Արշակունյաց 23	
ՀՎՀՀ	02512069	
Բանկի անվանումը	Երևանի թիվ 1 ՏԳԲ	
Բանկի հաշվի համար	900018003146	
Վճարող	ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի Աշխատակազմ	
Հասցե	Երևան Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ. 3	
ՀՎՀՀ	02647057	
Բանկի անվանումը		
Բանկի հաշվի համար		

Լրացում՝

NN	Անվանումը	Գումարը
1	ՀՀ Տավուշի մարզի ԸԻԴ, 16.05.2019թ. որոշում, ՏԴ1/0273/02/14 քաղ. գործով 16741907 փորձագիտական եզրակացություն	154,000
	Ընդամենը վճարման ենթակա՝	154,000

Գումարը բառերով՝ *հարյուր հիսունչորս հազար ՀՀ դրամ*

Կ.Տ.

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրեն՝
Ա. Սուչյան

Գլխ. հաշվապահ՝
Ա. Մելքոնյան

Ն. Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0023, ք. Երևան, Արշակունյաց պող. 23, հեռ.՝ (010) 44-11-36, ֆաքս՝ (010) 58-15-74, էլ. կայք՝ justexpert.am

N 17-0331-9

«02» 07 2019թ.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ Է. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
ք. Երևան, Մովսես Խորենացու 3, 7

Հարգելի պարոն Գևորգյան,

Ի պատասխան Ձեր 19.06.2019թ.-ի թիվ 17-2/31325-2019 գրության Ձեզ ենք ուղարկում թիվ ՏԴ1/0273/02/14 քաղաքացիական գործով 16.05.2019թ.-ին կայացված դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշման պատճենը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝
տնօրեն

Ա. Սուչյան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔ N 35015-2019
«04» 07 2019 թ.

Կատարող՝ իրավախորհրդատու Զ. Թամազյան, հեռ. (010) 44-11-36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԴ1/0273/02/14

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԴԱՏԱՇԻՆԱՐԱՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան),

նախագահությամբ դատավոր Սյուզաննա Ուլիխանյանի

քարտուղարությամբ՝ Արուսյակ Ավետիսյանի

մասնակցությամբ՝

հայցվորի ներկայացուցիչ՝ Արման Հարությունյանի

2019 թվականի մայիսի 16-ին, քաղաք Դիլիջանում,

դռնբաց դատական նիստում, քննելով թիվ ՏԴ1/0273/02/14 քաղաքացիական գործով հայցվոր ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացուցիչ Արման Հարությունյանի ներկայացրած միջնորդությունը՝ դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ՏԴ1/0273/02/14 քաղաքացիական գործն ըստ հայցի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ընդդեմ Լիանա Օհանյանի, երրորդ անձինք Ռաֆիկ Օհանյանի, Սվետլանա Աբրահամյանի, Վարդան Օհանյանի, Նարինե Օհանյանի, Կարինե Օհանյանի պարտապանի ընդհանուր գույքից բաժնեմաս առանձնացնելու և դրա նկատմամբ բռնագանձում տարածելու պահանջի մասին:

Դատական նիստին հայցվորի ներկայացուցիչ Ա.Հովհաննիսյանը Դատարանին միջնորդել է նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն՝ պարզելու համար արդյոք հնարավոր է բնեղենով առանձնացնել պատասխանողի բաժինը՝ համատեղ սեփականություն հանդիսացող գույքերից առանց ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքերին անհամաչափ վնաս պատճառելու, և որքան է կազմում ընդհանուր գույքերում պատասխանող Լիանա Օհանյանին պատկանող բաժնի արժեքը:

Դատարանին խնդրել է փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

1. Առկա է արդյո՞ք Տավուշի մարզի Սևքար համայնքում գտնվող՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Լիանա Օհանյանին, Ռաֆիկ Օհանյանին, Սվետլանա Աբրահամյանին, Վարդան Օհանյանին, Նարինե Օհանյանին, Կարինե Օհանյանին պատկանող 11-058-0008-0003 կադաստրային ծածկագրով բնակելի տան, 11-058-0233-0019, 11-058-0313-0069, 11-058-0314-0040, 11-058-0321-0003 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի Լիանա Օհանյանի բաժնի առանձնացման տեխնիկական հնարավորությունը, թե՝ ոչ, այդպիսի հնարավորության առկայության դեպքում առաջարկել Լիանա Օհանյանի բաժնի տարանջատման եղանակը,
2. ո՞րքան է կազմում Տավուշի մարզի Սևքար համայնքում գտնվող 11-058-0008-0003 կադաստրային ծածկագրով բնակելի տան, 11-058-0233-0019, 11-058-0313-0069, 11-058-0314-0040, 11-058-0321-0003 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի շուկայական արժեքը:

Դատարանին խնդրել է նաև փորձաքննության կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ <<Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ին:

Պատասխանող Լիանա Օհանյանը, երրորդ անձինք՝ Ռաֆիկ Օհանյանը, Սվետլանա Աբրահամյանը, Վարդան Օհանյանը, Նարինե Օհանյանը, Կարինե Օհանյանը չնայած պատշաճ ծանուցվել են նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին, սակայն դատական նիստին չեն ներկայացել:

Դատարանը, ղեկավարվելով 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 1-ին մասով, դատական նիստն անցկացրել և միջնորդությունը քննարկել է վերջիններիս բացակայությամբ:

17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանին առաջադրել հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում, ինչպես նաև նշել այն մասնագիտացված փորձագիտական հաստատությունը կամ այն փորձագետին, որոնց դատարանը կարող է հանձնարարել փորձաքննության կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը, դատարանը գտնում է, որ հայցապահանջի վերաբերյալ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ է նշանակել դատաապրանքագիտական և դատաշինարարատեխնիկական համալիր փորձաքննություն, հետևաբար միջնորդությունը ենթակա է բավարարման:

Դատարանը գտնում է նաև, որ փորձաքննության կատարումը պետք է հանձնարարել ՀՀ ԱՆ <<Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ին:

17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմի միջնորդությամբ

նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերի համար վճարում է այդ կողմը: Հետևաբար դատաապրանքագիտական և դատաշինարարատեխնիկական համալիր փորձաքննության հետ կապված ծախսերը ենթակա են վճարման հայցվորի կողմից:

17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, եթե նշանակել է փորձաքննություն:

Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է կասեցնել մինչև փորձաքննության ավարտը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ, 106-րդ, 108-րդ, 144-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

Հայցվոր ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ներկայացուցիչ Արման Հարությունյանի ներկայացրած միջնորդությունը բավարարել և քաղաքացիական գործով ըստ հայցի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ընդդեմ Լիանա Օհանյանի, երրորդ անձինք Ռաֆիկ Օհանյանի, Սվետլանա Աբրահամյանի, Վարդան Օհանյանի, Նարինե Օհանյանի, Կարինե Օհանյանի՝ պարտապանի ընդհանուր գույքից բաժնեմաս առանձնացնելու և դրա նկատմամբ բռնագանձում տարածելու պահանջի մասին, նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն:

Փորձաքննության կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ <<Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի համապատասխան փորձագետներին:

Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1. Հնարավոր է արդյոք տեխնիկապես առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու Տավուշի մարզի Սևքար համայնքում գտնվող 11-058-0008-0003 կադաստրային ծածկագրով բնակելի տան, 11-058-0233-0019, 11-058-0313-0069, 11-058-0314-0040, 11-058-0321-0003 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի Լիանա Օհանյանին պատկանող 1/6 բաժինը բնեղենով առանձնացնել ընդհանուր գույքից, եթե բնեղենով առանձնացումը տեխնիկապես հնարավոր է, ապա՝ ինչ եղանակներով:
2. որքան է կազմում Տավուշի մարզի Սևքար համայնքում գտնվող 11-058-0008-0003 կադաստրային ծածկագրով բնակելի տան, 11-058-0233-0019, 11-058-0313-0069, 11-058-0314-0040, 11-058-0321-0003 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի շուկայական գինը, որքան է կազմում նաև վերոնշյալ անշարժ գույքերի շուկայական գնի Լիանա Օհանյանի 1/6 բաժինը:

Փորձագետներին իրավունք վերապահել եզրակացությունում հետևություններ անել սույն որոշմամբ չառաջադրված այն հարցերի վերաբերյալ, որոնք կծագեն փորձաքննություն կատարելիս սույն գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների կապակցությամբ:

Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և նախազգուշացման

մասին ստորագրությունը եզրակացության հետ միասին ուղարկել դատարան՝ դատական նիստի արձանագրությանը կցելու համար:

Փորձաքննության հետ կապված ծախսերի կատարումը հանձնարարել հայցվոր ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին:

Կասեցնել թիվ ՏԴ1/0273/02/14 քաղաքացիական գործի վարույթը՝ մինչև փորձաքննության ավարտը:

Սույն որոշումը՝ կասեցման մասով, կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան գործին մասնակցող անձանց կողմից այն ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ս. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ